

ԳՐԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՐՈՒԱԳԾԵՐ

19-ՐԴ ԴԱՐՈՒ ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ՝

Մեր նոր գրականության սկիզբը:—Ամենից առաջ հուզէի որոշել, թէ մը ժամանակից պէտք է դնել մեր նոր գրականութեան սկիզբը: արդեօք 18-րդ դարում Վենետիկի Մխիթարեաններին, ինչպէս դնում են յաճախ:—Ես կարծում եմ, որ Մխիթարեաններն և ինքը Մխիթար Աբրահամ սկիզբ չեն, այլ ծնունդ և շարունակող են այն մեծ շարժման, որ առաջ է գալիս Հայոց եկեղեցու մէջ 17-րդ դարում և աւելում է մինչև 19-րդ դարու կէսերը և այս կողմն ևս»: Մեր Հնի և Նորի բաժանումը լինում է ոչ թէ 18-րդ դարում, այլ 16-րդ դարու վերջերը և 17-րդի սկզբներում, երբ համատարած իշխում էր աւերակ և թանձր ագիտութիւն: Երբ «աղիտութեամբ խոսանացեալ և կարգացեալ էր ազգս Հայոց,—ինչպէս գրում է Առաքել պատմագիրը,—և ոչ միայն ոչ ընթեռնութիւն, այլ և ոչ գգիւս դիտէին և ոչ զգործութիւն գրոց: Վասն զի անպիտանացեալ էր գիրքն յաշո մարդկան և իբրև զկոճեղս փայտից անկեալ յանկեան ուրեք՝ լցեալ հողով և մսխով»:—Անկումը սոսկալի էր. մեր հին քաղաքակրթութիւնը գրեթէ ամբողջապէս ոչնչացել էր այդ ժամանակ: Մարգիկ կարուէլ էին հնից այն աստիճանի, որ հոգևորականներն եկեղեցուց դուրս աշխարհական հագուստով էին շրջում, արեւներով ու չուսայով սեղան բարձրանում և մոռացել էին նոյն իսկ շատ եկեղեցական կարգեր:

Եւ հնի հենց այս մահուան մէջ է, որ սկսւում է ծնուել

1. Այս վերնագրի տակ՝ «Արարատի» ընթերցողներին հետզհետէ կը տրուին մեր 19-րդ դարու գրականութեան, գլխաւորապէս բանաստեղծութեան պատմութիւնից տեսութիւններ, որ քաղում եմ տասը տարի առաջ Ս. Էջմիածնի մեմարանի լտարաններում արած դասախօսութիւններից, ուղղելով եւ նորից մշակելով: Ասիլ չի ուզիլ, որ իմ գրածը չի կարող լինիլ գրականութեան պատմութիւն, որը, կարծում եմ, դժուար է գրիլ այժմ եւ մանաւանդ Էջմիածնում, ուր չկան բոլոր հեղինակները: Ես կաշխատեմ խօսիլ այն բոլոր հեղինակների մասին, որ կան այստեղ:

նորը՝ հին լեռածնութեամբ: Պէտք էր հայութիւնը փրկել լեռջնական անհումից և վայրենացումից: Եւ ահա՛ 17-րդ դարու տակաւածիւ լաւագոյն մարդկանց բոլոր ձգտումը կեդրոնանում է այն բանի մէջ, որ կենդանացնեն մեռնող հայ կեանքը: Դրա համար երկու ճանապարհ է ներկայանում նրանց — լեռածնել հին հայ կեանքը, գիրն ու գրականութիւնը և ապա օգտուել եւրոպական լուսաւորութիւնից, որ մեր նոր գրականութեան համար նոյն գերը պիտի խաղար, ինչ որ հին բիւզանդականը մեր հին գրականութեան համար: Այս երկու ուղիութեամբ առաջ է ընթանում մեր մտաւոր շարժումը Շահաբա՛ս Ա.—ի օրերից սկսած մինչև 19-րդ դարու վերջը, հարկաւ ժամանակի ընտան շրջափոխութեամբ: Եւրոպացիներէ ազդուելը սկզբում շատ թոյլ էր, առաջ էր գալիս միայն դադիականների, վաճառականների, կաթոլիկ քարոզիչների և տպագրութեան համար եւրոպա գնացող մարդկանց ձեռով, բայց այդ ազդեցութիւնը հետզհետէ զօրանում է և 19-րդ դարու երկրորդ կէսից առաջին տեղն է ընդունում: մինչ հին լեռածնութիւնը հենց սկզբից զօրեղ էր և նոյն թափով շարունակում է մինչև 19-րդ դարու կէսերը, երբ թողնելով իւր կրօնական ընտանութիւնը՝ աշխարհականանում է:

Հին մեռելութեան մէջ լեռածնութիւնն առաջ են բերում ոչ թէ Մխիթար Աբբան և Մխիթարեանները, այլ Ամբերդցի Սարգիս Եպիսկոպոսը († 1620 թ.), որ միաբան էր Սաղմոսավանքի, և Տրապիզոնցի Տէր Կիրակոսը († 1621 թ.), որոնք բուն երկրի մէջ հիմնում են Սիւնեաց Անապատը Տաթևի մօտ: Դրանցից անբաժան պիտի համարել և Սիւնեցի Մովսէս վարդապետին, որոնք և եղել են «առիթ լուսաւորութեան ազգիս Հայոց»: Դրանք և դրանց աշակերտներն են, որ մտածում և գործում են մեր խոպանացած կեանքը նորոգելու համար:

Այդ մարդիկն իբրև լեռածնողներ, ինչպէս յատուկ է ամեն լեռածնութեան մարդու, աչքերը դարձնելով գէպի մեր հինը՝ շատ ճիշտ նկատում են մեր հին կեանքի ամենից կարևոր կողմը: Այնտեղ նրանք տեսնում են ամենից առաջ՝ ծաղկած վանքեր և անապատներ և իրենք ևս մեծամեծ ջանքերով կարողանում են հետևելով հսերին՝ նորերը հիմնել: Զարմանալի է, թէ ինչպէս 17-րդ դարու այն անասելի աղքատութեան մէջ հնարաւոր է լինում ոչ միայն բազմաթիւ հին վանքեր նորոգել, այլ և շատ նորերը կանգնեցնել՝ դարին յատուկ մի ճարտարապետութեամբ: Մխիթար Աբբան իւր հիմնած վանքով ահա այս մի և նոյն գործն է շարունակում, ինչ որ տեղի է ունեցել 17-րդ դարում Հայաստանում:

Վանքերը կենդանանալով՝ կենդանութիւն և թարմ հոսանք են մտցնում ժողովրդի թմրութեան մէջ: Զարթնում է նոր ուժով կրօնական ոգին: Արդարեւ այդ վանական և անսպրտային կեանքի հետ անխուսափելի կերպով նորոգում են նաև հին ճգնաւորութիւնն ու խստակրօն կեանքը, նոր ոյժ են ստանում հին անպէտք հասկացողութիւններն ու աշխարհահայեացքը, բայց դա արգելք չէր լինում, որ մեր վանքերը մի անգամ էլ կատարէին իրենց պատմական քաղաքակրթական գերը, որ ունեցել էին 10-րդ դարում: Դրանք մեղմացնում էին ժողովրդի կոշտացած ու բռնացած բարքերը և որ դիտաւորն է՝ գիր ու գրագիտութիւն էին տարածում: Որովհետև վանականներից շատերը լոկ աղօթքով չէին պարապում և իրենց ամբողջ կեանքն աշխարհից կարուած չէին անց կացնում, այլ սովորում էին կարգալ, գրել և մանկելով ժողովրդի մէջ՝ քարոզում էին նրան և երեսմաների համար «դպրատներ», այսինքն դպրոցներ հիմնում: Մեր վանական և ծխական դպրոցների սկիզբն ահա այս ժամանակից է դալիս:

Ապա այդ մարդիկը մեծամեծ, խակապէս հիացմունք պատճառող Զանքերով աշխատում են կարգալ և հասկանալ մեր անհասկանալի դարձած ու մոռացուած գրականութիւնն ամբողջ, թէ եկեղեցական և թէ աշխարհիկ բնաւորութիւն ունեցող ձեռագիրները՝ ինքնուրոյն թէ թարգմանական երկերը՝ որքան որ կային կամ ճարում էին: Նրանք արտագրում են բազմաթիւ նոր ձեռագիրներ՝ աշխատում են զտել օննթոռների ձեռով լատինացած գրաբար լեզուն՝ յօրինում են քերականութեան, արամաբանութեան և այլ նոր դասագրքեր՝ օգտուելով գլխաւորապէս հին գրքերից, և նոյն իսկ թարգմանութիւններ էլ են անում: Շարժման գլխաւոր կեդրոններ հանդիսանում են Էջմիածին և Նոյ Զուղա, որտեղից և այս մտաւոր շարժումն անցնում է Կ Պոլիս: Այս ամենի հետևանքն այն է լինում, որ բնականաբար առաջ է դալիս մի նոր գրաբար գրականութիւն, որի առաջին ներկայացուցիչները լինում են Սիմէոն Զուղայեցի և Առաքել Գաւրիթեցի, իսկ վերջինը Արսէն Բագրատունի:

Իմ նպատակը չէ 17 և 18-րդ դարերի գրականութեան մասին խօսել այստեղ. այլ այն միայն շեշտել եմ ուղում, որ ինչպէս մեր՝ 19-րդ դարու կեանքի ձգտումը, նոյնպէս և գրաբար գրականութիւնը բնական շարունակութիւն է նախորդ երկու դարերի: Այն ինչ որ 17-րդ դարն սկսել էր և որ այդ և յաջորդ դարում շատ դանդաղ կերպով և մեծ ընդհատումներով էր առաջ դնացել բուն երկրի մէջ, 19-րդ դարն

ստանում է իւրեւ ժառանգութիւն և աւելի յաջող հանգամանքներէ մէջ աւելի արագ է առաջ տանում և զարգացնում: Անցած դարու նոր դրաբար գրականութեան սկիզբն ուրեմն 17-րդ դարու շարժման մէջ պէտք է տեսնել և ոչ 18-րդ դարու մէջ: Եւ որովհետեւ 19-րդ դարու դրաբար գրականութիւնը կարելի չէ բաժանել աշխարհաբար գրականութիւնից, քանի որ առաջինն իւր գրական խնդիրներն աւանդում է երկրորդին և լինում է ժամանակ, գրաբարից աշխարհաբարին անցման շրջանում: Երբ մի և նոյն մարդիկը երկու լեզուն ևս, հինը և նորը, բանեցնում են,—ասլա և մեր նոր գրականութիւնն սկսում է 17-րդ դարում, և այս վերջին երեք դարերը շարունակութիւն են միմեանց: 17-րդ դարն է միայն, որ շարունակող չէ նախորդին, այլ միայն վերածնող:

Ի՞նչ է մեր նոր գրաբար գրականութեան իշխող գաղափարն ու զգացումը սկսած 17-րդ դարից մինչև վերջը:—Երկու բան, կրօնասիրութիւն և հայրենասիրութիւն, որոնք երկուսն էլ զօրեղ կերպով արտայայտուած գտնում ենք արդէն Առաքել Դաւրիթեցու երկի մէջ: Կրօնասիրութիւնը, կամ աւելի ճիշտ՝ կրօնական-եկեղեցական զգացումը նորոգուած էր նոր վանական կեանքով՝ հնի ազդեցութեամբ և նմանողութեամբ. բայց և հայրենասիրական գաղափարը, որ ի հարկէ 17 և 18-րդ դարերում միշտ այնպէս չէին հասկանում, ինչպէս այժմ, արդիւնք էր հին գրականութեան ազդեցութեան: Եւ այս մասին հներից անպայման ամենամեծ դերն է կատարել Մովսէս Խորենացին, որ այս շրջանում սիրուած, շատ կարգացուած և ամենից շատ արտագրուած գիրքն է եղել մեր հին պատմագիրներէ մէջ: Այս է պատճառը, որ մեր հին պատմագիրներէից առաջին անգամ նրա Հայոց պատմութիւնն է տպագրւում 1695 թուին աշխատութեամբ Վանանդեցի Թովմա եպիսկոպոսի, որ դրա համար մինչև Ամատերդամ է գնում: Մի անգամ որ տպագրութեան արուեստը բանում էր հայ գրքերի համար, պէտք էր մատչելի դարձնել և տարածել սիրուած պատմական երկը: Եթէ Խորենացու Հայոց պատմութեան երեան գալն իւր ժամանակին՝ իւրեւ առաջին պատմութիւն Հայոց՝ նշան է եղել ազդի ինքնադիտակցութեան, այժմ էլ ամենից առաջ նոյն գրքի տպագրութիւնը պիտի լինէր ազդի մէջ ինքնաճանաչութիւն և հայրենասիրութիւն մտցնելու համար:

Բայց Խորենացին մենակ բաւական չէր հին կեանքի վերածնութեան համար: Ուստի և 18-րդ դարու սկզբից Կ. Պոլսում, որ ժամանակի յարմարաւոր մտաւոր կետրոնն էր Հայոց համար, աշխատում են տպագրել և հետզհետէ տպա-

գրում են մի շարք մեր հին մատենագիրներից, ինչպէս՝ Ագաթանգեղոս, Փարսառոս Իււղանդ, Եղիշէ, Զենոբ Պլաղ, Մեղրոպ Երէց, Սանփանոս Օրբելեան և ին. իսկ կրօնական բովանդակութիւն ունեցողներից՝ Նարեկացի, Յաճախապատում, Եղնիկ, Լամբրոսնացու Ատենաբանութիւն, ձառքնաիր և ին. Հին գրականութեան մի պատկառելի վերածնութիւն ուրեմն տպագրութեան միջոցով, և այս այն ժամանակ, երբ Վենետիկ հայ միաբանութիւնը դեռ նոր էր հիմնում և երբ նա դեռ շատ ուշ, միայն 18-րդ դարու վերջին քառորդում պիտի երևան գար իբրև հին լեզուի վերածնող և գրականութեան հրատարակիչ:

Բարեբախտութիւնը տակայն այն էր, որ Մխիթար Աբրեյից յետոյ (1676—1749), որի մեծ գործը գրաբարի համար է նրա Բառարանը, Մխիթարեանների մէջ գտնէ 18-րդ դարու վերջին քառորդում հանդէս են գալիս մի քանի իսկապէս աշխատող և բեղմնաւոր անձեր: Միքայէլ Չամչեանն իւր քերականութեամբ (1779 թ.) և Հայոց պատմութեամբ (1784—1786 թ.) մի անգամից բարձրացնում է Մխիթարեանների անունը, որ մինչ այդ գրեթէ յայտնի չէր, և խոշոր ազդեցութիւն է թողնում յետագայ սերունդների վրայ: Մխիթարեանները սեպհական տպարան ձեռք են բերում միայն 1788 թուին, երբ սկսում են մտածել և նախնեաց տպագրութեան մասին. բայց այս մեծ գործը շատ դանդաղ և առանց որոշ ծրագրի է առաջ գնում: Հազիւ մի չորս հինգ դիրք լայն ընծայած՝ վախճանում է երկրորդ արբահայր Ստ. Մելքոնեանը (1750—1800) և դադարում է գործը և միայն Սուքիաս Սոմալի (1824—1846) օրով դարձեալ սկսում է, այս անգամ կանոնաւորապէս և յաջողութեամբ: Վենետիկ Մխիթարեանները դրանով վաստակում են նախնեաց մատենագրութեան հրատարակիչներ լինելու փառքը, թեպէտ և առաջնութիւնը նրանց չի պատկանում: Բայց այս հանգամանքն ի հարկէ չի պահանջնում նրանց վաստակի արժանիքը:

Նրանց անուան փայլը դնալով անում է. որովհետեւ եթէ մի կողմից Չամչեանը իւր քերականութեամբ գրաբար լեզուն էր յատակում և միջոց ընծայում հեշտութեամբ սովորելու այն, իսկ իւր Հայոց պատմութեամբ ազգային անցեալի ուսումնասիրութիւնն էր զիւրացնում, միւս կողմից Խնձիճեանը իւր Հնախօսութեամբ և Հայաստանի աշխարհագրութեամբ Հայոց հին ու նոր աշխարհն էր ծանօթ դարձնում. և վերջապէս այս ամենի վրայ աւելանում էր Հայկազեան լեզուի նոր քառգիրը (1836—1837 թ.), մի հսկայական աշխատանք, որով ան-

գնահատելի ծառայութիւն է մատուցուել և դեռ շատ երկար կը մատուցուի մեր լեզուի ուսումնասիրութեան համար: Իրանց հետ միացած և բազմաթիւ գրքեր ու դատադրքեր՝ կրօնական—եկեղեցական, փիլիսոփայական, պատմական, աշխարհագրական և այլ բովանդակութեամբ, յաճախ նոյն իսկ մեծամեծ հատորներով, հրատարակուած են անխնջ աշխատութեամբ: 19-րդ դարու առաջին կէսը մի բուռն գործունէութեան շրջան է Մխիթարեանների համար, երբ նրանք հրապարակը լցնում են իրենց գրական աշխատանքներով և թարգմանութիւններով, աւելի շատ գրքերով քան կարդացողները կային և շատ շատ աւելի քան հասկացողներ:

Այսպիսով Մխիթարեանները գլուխ են բերում այն, որ երկու հարիւրից աւելի տարիներ առաջ ձեռնարկել էին հայ վարդապետներն արեւելքում. բայց բուն երկրի մէջ մեծամեծ դժուարութիւնների և քաղաքական դժբախտ պատահարների հետ կապուած լինելով՝ գլուխ չէր գալիս այնպէս, ինչպէս վը ցանկային կատարած լինել այդ գործի համար աշխատողները: Մխիթարեանները բարեբախտաբար իրենց ձեռքն են առնում գրականութեան այս վերածնութիւնը և վայելելով եւրոպական յարմարութիւնները և խաղաղ ու անվտանգ կեանքի դիւրութիւնը՝ անընդհատ առաջ են տանում: Նրանք մատչելի են դարձնում մեր հին գրականութեան կարեւորագոյն մասը. կենդանացնում են, միայն գրքերում, հին գրաբարը ոչ միայն կատարելապէս զտելով լատինաբանութիւններից, այլ և նորագելով, հարստացնելով և աղնուացնելով այն ոստիճանի, որ ընդունակ է դառնում այնպիսի բանաստեղծական գրութիւններ արտայայտութեան համար, որ չէր ունեցել հնումը:

Բանաստեղծութեան վիճակը 19-րդ դարու առաջին երեսնամեակում: — Վերածնութեան առաջին շրջանի մարդիկը, հաղիւ գրել—կարդալու և գրոց լեզուի ուսումը սովորած, առանց տրտալին ծանօթութիւնների, մի քանի կցկտուր ճարտագանական, տրամաբանական ու պատմական տեղեկութիւններ ոտացած մի սերունդ, անշուշտ չէին կարող ոչ միայն բանաստեղծութիւն, այլ և ընդհանրապէս արժէքաւոր գրականութիւն առաջացնել. մանաւանդ որ վերածնութեան գործը նպաստաւոր պայմանների մէջ չէր բուն երկրում և շարունակ ընդհատուած էր: Եւ եթէ այդ մարդիկն արտադրէին էլ գրական երկեր, դրանք պիտի լինէին մեր հնի նմանողութեամբ պատմագրութիւն ու քնարերգութիւն: Ուսումն ու գրագիտութիւնը եկեղեցականների ձեռին էր, և բնականօրէն գրա-

կանութեան մշակութիւնն էլ նրանք պիտի անէին. բայց հոգեւորականը իւր կոչմամբ արդէն ընդունակ չէ բազմակողմանի գրականութիւն և մասնաւորապէս բանաստեղծութիւն առաջ բերելու: Այդ շրջանի մարդկանց միտքն զբաղուած է գլխաւորապէս կորցրած ծանօթութիւնները յետ բերելով. գեղեցիկ վրայ ոչ մտածելու ժամանակ ունէին և ոչ հնարաւորութիւն: Գեղեցիկ բաւականութիւնը նրանք տալիս էին հին երգարաններ արտագրելով կամ տպագրելով, կամ երբեմն տաղեր յօրինելով, որոնք շատ աւելի ստոր են քան իրենց նմանողութեան օրինակները:

Այս նոր երգերի ու տաղերի նիւթն ևս կազմում են հարկաւ վարդն ու սոխակը, կամ խնջօյքի ուրախութիւնը, բայց ամենից առաջ՝ կրօնական-բարոյական դադափարները: Ժամանակի ոգին էր այդպէս. կրօնական ջերմեռանդութիւնը մեծ էր, ուստի և պահանջ էր դրացւում ոչ միայն նոր կրօնական տաղերի ու գանձերի, այլ և նոր աղօթքներէ: Նոյն իսկ Ժողովրդական երգիչները, որոնց մէջ գլխաւոր տեղը բռնում է Սայաթ-Նովան 18-րդ դարու երկրորդ կէտում, կրում են իրենց մէջ Ժամանակի այդ ոգին:

Սակայն միայն քնարերգութեամբ ու աղօթքներով չի բաւականանում մեր վերածնութեան միտքը. 17-րդ դարում արդէն ձգտումն է երևում նաև վիպական բանաստեղծութիւն առաջ բերելու. բայց դարձեալ կրօնական-եկեղեցական բովանդակութեամբ: Ուստի վէպի նիւթ են Ա. Գրբի և ուրիշ կրօնական պատմութիւններ, որոնք ոտանաւորի են վերածւում, ինչպէս եղել է և մեր հին գրականութեան մէջ: Եւ ինչպէս սերոյ ու կրօնական տաղերը, նոյնպէս և այս բանաստեղծութիւնը շատ կոնվենցիոնել է, զուրկ կենդանի երակից, չոր ու ցամաք պատմութեան, և միայն ոտանաւորով հետեւի գրութեամբ:

Այս մեռած բանաստեղծութեան մասին դադափար կազմելու համար բաւական է յիշատակել այստեղ Կ. Պոլսեցի ՏԷՐԿՈՄԻՏԱՍ ՔԱԼՆԱՅԻ «Ոտանաւորը բանք ի գործս առաքելոց», որ տպուած է Կ. Պոլսում 1704 թուին: Հեղինակն ինքը գրքի վերջում ասում է, թէ մի պատմագիրը է տեսել, որի մէջ գրուած է եղել թէ 536 թ. Յուստինիանոս կայսրի օրով «հռչակեալ Արագօրոս» կիսասարկաւազ սրբուհւոյ եկեղեցւոյն Հռոմայ դարմանալի Ֆիլիսօֆոս և վարդապետ տաղաչափութեանց» ոտանաւոր է գարծրել «Գործք առաքելոց»։ Ինքն էլ իմանալով, որ Հայոց մէջ չկայ այդպիսի բան՝ իւր կողմից տաղաչափում է այդ գիրքը հետեւելով Ներսէս Ծնորհալու «Յիսուս որդի» երկին:

Բայց ո՛ւր «Յիսուս որդին», ո՛ւր որա աշխատութիւնը. այնտեղ ստեղծագործութիւն կայ և ջերմ զգացում, որով համակուժ է ընթերցողը. իսկ այստեղ սառն, մեքենայական տողաչափութիւն միայն «Գործը առաքելոցի» բառերի:

«Ձբանն առաջին զոր արարի

Ասկա փրկութեան ամենայնի:

Ո՛, Թէոփիլէ այր բարի

Աշակերտ բանին ճշմարտի:

Չոր սկսաւ Յիսուս առնել

Եւ ապա մեզ ուսուցանել:

Մինչև յօրըն պատուիրելոյ

Որքոց առաքելոցն իւրոյ:

Ի ձեռն հոգւոյն վկայեալ

Ընտրեալ զնոսա և վերացեալ:

Որոց եցոյց զինքն կենդանի

Յետ չարչարանացն և խաչի:

Բազում արուեստս նոցա ցուցեալ

Յաւուրս քառասուն նոցա երևեալ»:

Եւ այսպէս մինչև վերջը:

Աւելի լաւ վիճակի մէջ չէ գրականութիւնը և 18-րդ դարու վերջում և 19-րդի սկզբում: Հայրենասիրական դադարը, որ վերջին դարու ընթացողութեան գլխաւոր շարժիչն է, դեռ չի զտուած կրօնական-եկեղեցականից: Այդ ներկայանում է կամ դեռ ողբի ձևով, ինչպէս մեր հին գրականութեան մէջ է եղել. կամ թէ՛ ինչպէս դարձեալ յաճախ հնումը եղել է, կեդրոնացած է էջմիածնի շուրջը, որի անունը ժողովրդականացնելու և սիրելի դարձնելու համար գրում են ներբողեաններ ու տաղեր: Թէ ինչ աստիճանի ցամաք ու սնանկ է գրականութիւն այս մասին, այդ կարելի է տեսնել 1807 թուին Կ. Պոլսում տպուած «Ներբողեան սրբոյ Աթոռոյն Էջմիածնի» գրքոյկից, որ յօրինել է նուիրակ ԱՍՏԱԲԱՏՅԻ ԱԲՐԱՀԱՄ ՎԱՐԳԱՊԵՏԸ «Ձկնի Աստուծոյ՝ օրհնեալ ազգիս Հայոց հոգեւոր հայրն և մայրն՝ են երկոքին սոքա. այսինքն Լուսաւորելն հոգւոյ մերոց սուրբն Գրիգոր. որ ամս հնգետասան ի բովս չարչարանաց՝ որպէս օսկի մաքրեցաւ. և Աստուածակերտ աթոռս սուրբ էջմիածնի Սոքա են յետ Աստուծոյ երախտաւորք մեր և բիւր բարեաց պատճառք. զորս պարտիմք ճանաչել. և առաւել սիրոյ արժանի համարել ըստ առաքելոյն: Թէո. Ի. 12. 13. զչնորհս բարեբարութեանցն մի՛ մոռանալ ըստ Սիրաքայ, ԻԹ. 20: Եւ յամենայնի զսոցանէ գոհանալ. ի հաւատս

սոցա հաստատուն մնալ» ևլն: Մարդ սպասում է, թէ էջմիածնի համար մի կենդանի ներքող գտնի, որի մէջ ցոյց տրուի նրա նշանակութիւնը հայ կեանքի մէջ, նրա կատարած գերը, և տեղը գտնում է մի ահագին կուտակութիւն Սուրբ Գրքի վկայութիւնների, որ ծայրայեղ աստիճանի սքոլաստիկ մեկնութիւններով յարմարեցրած են էջմիածնի վրայ:

«Վասն զի՝ որպէս ասէ Արիստոտէլ գլուխն ձեմականաց դասուն, ի սեռս իւրաքանչիւր իրաց՝ մին է առաջին և գովելի քան զամենայնսն: Զորօրինակ՝ ի յիննեակ դասակարգութիւնս հրեշտակաց՝ առաջին և գովելի են Սերօքէքն. ի տասն երկինս՝ հրեղէն երկինքն. ի մէջ լուսաւորաց՝ արեգակն. ի չորս տարերս՝ հուրն. ի մէջ հողմոց՝ հարաւայլինն. ի եօթն հրահալելիս՝ ոսկին. ի մէջ ականց՝ անդամանդն. ի մէջ ծաղկանց՝ վարդն. ի քաղցրահամ ուտելիս՝ մեղրն. ի կերակուրս՝ հացն. ի հեղուկ նիւթս՝ բաղասանն. ի լերինս՝ Սիօն. ի քաղաքս՝ սուրբ Երուսաղէմ. ի տասն սեռականագոյն սեռս՝ գոյացութիւնն. ի յառաքինութիւնս՝ սէրն. և ի յաղօթս Աստուածուսոյց աղօթքն: (Զորոց ամենեցուն դովութեան պատճառս՝ տե՛ս ի մեկնութեան Հայր մերին, ի գլուխն եօթներորդ, յօրինեալն ի մէջն): Արդ՝ որպէս ի սեռս իւրաքանչիւր էակի՝ մին է գլուխ ամենայնի, առաջին և գովելի քան զամենայն, ըստ որում կարգաւ ցուցաք. ըստ այսմ օրինակի՝ ի վանորայս և ի յեկեղեցիս հայկազեանս ազգի՝ է ամենագովելի և առաջին՝ գլուխ և մայր ամենեցուն՝ Քրիստոսահիմն և Աստուածակերա Աթոռս մեր՝ Սուրբ Էջմիածին: Եւ սոյն այս ցուցանի՝ ըստ տասն ստորագութեանցն Արիստոտէլ» (եր. 16):—Եւ ասլա վարդապետը Արիստոտէլի տասն ստորագութիւններով ապացուցանում է, թէ ինչպէս էջմիածինը գովելի է ըստ գոյացութեանն, ըստ քանակութեանն, ըստ առնչութեանն, ըստ որակութեանն, ըստ երբին, ըստ սւրին ևլն:

Եւ այց այդ դեռ բաւական չէ: Գովելի է էջմիածինը նաեւ նրա համար, որ եօթն սեղան ունի. իսկ սեղանների եօթն թուի մէջ մեծ խորհուրդ կայ, և ի՛նչ է այդ խորհրդաւորութիւնը: «Նախ զի եօթն են մոլորական աստեղքն: Երկրորդ՝ զի նահապեան նոյ առ ջրհեղեղաւն, յամենայն սուրբ անտոնոց եօթն եօթն եմոյժ ընդ իւր ի տապան . . . Երրորդ՝ զի թիւն եօթնեակ ի թուաբանից կոչս կոչի . . . Զորրորդ՝ զի եօթն էին ընտիր և գեղեցիկ հասկքն՝ որք միանգամ ելանէին ի միում փնճի, ի նշանակ լինութեան եօթն ամաց. զոր Փարաւօն ետես և Յովսէփ մեկնեաց . . . Հինգերորդ՝ զի եօթն էին ճրագարանքն տալիսաձոյլ Աշտանակին, զոր արար Մովսէս . . . Վեցերորդ՝ զի

Եօթն էին դիտակը գլխոյն քաջին Սամիտօնի» . . . և այսպէս մի ահագին շարք, ամբողջ վաթսուս երես, սրոնց մէջ Եջմիածնի անուանը բարձրացնելու համար բացատրում է, եօթն թուի խորհրդաւորութիւնը: Նոյնպիսի մի շարքով (61 երես) զովաբանելով Եջմիածնի հինգ կաթուղիկէն, չորս սիւնը և զայց է ապիս հինգի և չորսի խորհրդաւորութիւնը, և վերջապէս գտնում է Եջմիածին անունը, և մինչև անգամ դաւմարում է առաերի թուական նշանակութիւնը և եզրակացնում, «Եջմիածին՝ խորհրդաւոր անուն, որոյ առաւնքն քառ համարագական հաշուի բաղկացուցանեն զթիւ ՌՇՂԸ: Եւ յասի հազար հինգ հարիւրն՝ (սը է երիցս հինգ,) զամենասուրբ երբորգութեանն և զհնդից զգայութեանց կտաարեալ կենդանւոյ ցուցանէ խորհուրդս: Եւ իննսուսն որ է իննիցս տասն՝ զՔրիստոսի բնակելոյն ինն ամիս ի յորովայն սրբոյ Կուսին, և զիննեակ հրեշտակաց, և զատրիճանաւորացն եկեղեցւոյ՝ նշանակէ խորհուրդս: Այլ և՝ ցուցանէ զտասն երկինս և զտասնաբանեաց օրէնս, զտասն խորանս, և զտասն ստորագրութիւնս, զտասն եղանակս ձայնից, զտասն հոլովս անուան, և զտասն զօրութիւնս հօգւոյն» ևլն:

Ահա թէ ինչպէս և ինչպիսի միջոցներով են մի զար առաջ աշխատել բարձրացնել Եջմիածնի անունը և կուսել օտար քաղաքիչները դէմ: Ինչ որ ասես կայ այդ ներդրեանի մէջ բայց Եջմիածինը չկայ: Արբահամ վարդապետը, որ իւր ժամանակի գիտնականներից մէկն է եղել, մինչև անգամ տողեր է յօրինում Եջմիածնի համար և եղանակներն էլ նշանակում, թէ ինչպէս պիտի երգեն: Նոյն իսկ աղօթքներ էլ է գրում ուղուած Եջմիածնին, և այս ամենը Աստուածաշնչի խօրքերը ժողովելով և յարմարեցնելով Եջմիածնի վրայ: Դա «գիտնական» տիրացութեան մի արգիւնը էր, որ դրանից աւելի բան չէր կարող արտադրել «ի փառս Մօրն հաւատոյ»: Դժբախտաբար այդ անմտութիւններն էին գրաւում ժամանակի հասկացողներին:

Նոյնպիսի մի տիրացութեան արգիւնը է և Կեսարացի ԴԱՊԱՍԱԽԱԼԵԱՆ ԳՐԻԳՈՐ զպրի «Երգարանը», ապ. Կ. Պոլիս 1803 թուին: Այդ մարդն եղել է ժամանակի տկանաւոր երգիչը, ծանօթ արևելեան եղանակներին և երաժշտութեան, և անպայման գործնական նպատակի համար հրատարակել է իւր երգարանը, որի երեսին «շարագրեցեալ» է գրում, բայց ունի և մի երկրորդ մաս, որի երգերն իրենք չեն: Այստեղ ամենայն ինչ կայ, և թուրքերէն ու յունարէն երգեր իրենց թարգմանութիւններով, և աղօթքներ, և երաժշտութեան մասին: Իւր յօ-

ընծան առաջին մասն է, որի տաղերի մեծ մասի համար նշանակած է թէ ինչ եղանակով պիտի երգուին. եղանակները թուրքական կամ արաբական են:

Մի կողմ թողնելով աղօթախառն երգերը՝ «Աղերս առ Ս. Հոգին Աստուած», «Առ Հայրն Երկնաւոր», «Առ Մայրն Երանութեան» ևլն, ինչպէս և բարոյակրթական երգերը՝ «Երգ խրատորէն» կոչուածները, մենք այստեղ տեսնում ենք, որ տաղառաց դպիրը սիրահար է բնութեան, դարնան, վարդի ու երգնակի (սոխակի), որոնց և վերաբերում են տաղերի խոշոր մասը: Բայց նա բնութիւն երգելով հանդերձ բնութիւն չի տեսնում. նրա երգած երկինքը երկինք չէ, այլ միջնագարեան երեւակայութեան երկինքը: Ահա թէ ինչպէս է սկսում նրա «Երգն ի վերայ երկնի»:

Ի յոչնչէ էացելոց.

Համաեղեալ գոյացելոց.

Նախաըսկիղբն՝ հանրից նոցին.

Ի յԱստուծոյ գոյ ածելոց.

Կամարատես՝ մեծ շրջանակ.

Յոյժ աննըման՝ լայն ընդարձակ:

Եւ այսպէս, մինչև տների սկզբի տառերը կազմեն «Ի Գրիգորէ»: Երկինքը բանաստեղծի համար է դեռ մի «գերակայան», մի «բախճանական տեղ ցնծութեան յորում բարիքն երանութեան», մտքից ու խելքից վեր մի լուսաւոր տեղ, մի «անսիւն խորանայարկ», լայն ընդարձակ, ուր որբերի հոյլերն են կենում և տեղի է լուսնի և արևի: Դա կրօնական հայեացքով երկինքն է, «Վերին Երուսաղէմը», որ և մի ուրիշ երգով դարձեալ գովում է Գապասախալեանը: Շատ հասկանալի է, որ այսպիսի երկինքը չպիտի տեսնէր բանաստեղծը և այդպիսի բնութիւնից ոչ մի տպաւորութիւն չստանալով՝ նրա երգն էլ բնութեան տրամադրութիւն չպիտի դարձնէ:

Այսպէս և «գեղեցկատեսիլ յերեսս երկնի կարի ցանկալի, արծաթանման բոցաճաճանչ յոյժ զարմանալի» աստղերը նիւթ են դառնում ոտանաւորի ոչ իրենց թողած տպաւորութեամբ, այլ իրենց մոտին եղած աւանդութիւններով, հաւատալիքներով ու անապաշտութիւններով: Այսպէս և օդը, երկիրը, ծովը գովում է Գապասախալեանն առանձին երգերով, որոնցով նա միայն Ֆիզիկական և կրօնական աշխարհագրութիւն է դրում և ոչ թէ բանաստեղծութիւն:

Մեծ թուով երգեր ունի նուիրած և վարդին ու երգնակին, որ սրան էլ հրապուրում են ինչպէս մեր միջնագարեան

երգիչներին. բայց ոչ մէկի մէջ չի երեւում այն եռանդն ու կորովը, արտայայտութեան այն ոյժը, որ ունին Յովհաննէս Քլկուրանցին կամ Գրիգոր Աղթամարցին. չկայ ոչ մի նոր գեղեցիկ գիւտ խօսքի: Այստեղ էլ անշուշտ վարդն ու սոխակն իրենց սիրոյ տխրութեամբ և ուրախութեամբ անբաժան են դարնան ծաղկալից, գեղեցիկ եղանակից: Այստեղ էլ վարդը բացւում է ու բուրում փայլելով. դարունը ծաղկում է. դաշտերը զարգարւում և ուրախանում են գետերը հոսում, քամին փչում, թռչունները կարկաչում քաղցրանուագ և վարդը կարիք է զգում, որ «գարմանատիպ» սիրահար սոխակը երգէ իրեն և կանչում է նրան,— և այս է ամենը, որ ինչ Գրիգոր դպիրը յեղյեղում է իր սիրոյ երգերի մէջ: Եւ այս ամենը յօրինուած են հսկերի փշրանքներով՝ միայն մի բարի նպատակով, որ հայերէն բառեր լինին յայտնի եղանակներն ասելու համար: Հետեւեալները Գապասախալեանի լաւագոյն երգերն են.

Ի վարդի յերգնակն.

Արբ', սէր իմ, արբ' երգեա ցնծալի.

Եղանակաւ՝ միշտ քաղցրաձայն բաղձալի.

Ահա եհաս դարուն ծաղկեալ՝ ոխրալի.

Սիրա վշտալի՝

Իս վիրալի

Վարանեալ.

Եմ սգալի՝

Միշտ խղճալի

Ընկեցեալ:

Ողբերգական Լըգով եկ ձայն արձակեա.

Ինձ լալագին եղանակաւ ձայնակցեա՝

Ձայն գովելի՝ երգ ցանկալի գու երգեա.

Սիրա վշտալի ելն:

Լալով, ողբով, աղաղակաւ արտասուեմ.

Չքնաղ ձայնիդ՝ քոյին ահա ըսպասեմ.

Նովաւ յաւէտ՝ զովանալով հանդարտեմ.

Սիրա վշտալի եմ:

(Սորա ձայնն է՝ ողբերգական՝ լո՛ւր սէր իմ:

Պիր կիտէրիմ՝ պիր արտըմա պագարըմ):

Առ երգնակն:

Արբ', երգնակ դու ցանկալի,

Շըբեղաձայն գարմանալի.

Գեղեցիկ ես թռչնոց համայնց,
 Երգեա սիրով միշտ ցնծալի,
 Գովելի, գովելի, գովելի, գովելի լի լի:
 Ախրով ցընծա՛ ստաստելով
 Քաղցրիկ ձայնիւ երգակցելով,
 Զայն քո սիրուն զարմանալի
 Արի երգեա երգ ցընծալի.
 Գովելի ելն:
 Ախրահարկաջ դու պանծալի,
 Զարմանաձայն հիանալի.
 Արժան բարի՝ երգ արեկոյ.
 Երգեա՛, սէր իմ, միշտ սիրալի.
 Գովելի ելն:
 Ուրախացեալ՝ ցընծա՛ սիրով.
 Արի՛ փութով ձայնիւ երգով.
 Ահա է ժամ երգս առնելոյ,
 Գարունն եհաս՝ հոտ բուրելոյ:
 Գովելի ելն:
 Էլի՞ճ Զայնիւ՝ ասէ՛ սրմո:
 Կեօրալում պիւր դօն՝ չէ յիրանայ:)

Նոյն անկենդան, կեանքից կարուած և հետեակ բանաստեղծութիւնն են անուամբ մինչև երեսնական թուականները նաև Վենետիկի Մխիթարեանները: Առաջին մեծ ստանաւոր գրողն է սրանց մէջ 18-րդ դարու վերջում ՂԱԻԿԱՅ ԻՆՃԻՃԵԱՆԸ (1758—1833): Ինճիճեան և բանաստեղծ, շատ արթորինակ է, բայց Մխիթարեանների յատկութիւնն է այդ. նոյնն եղել է և Ալիշանը և ուրիշները: Բայց մինչ Ալիշանն իսկական բանաստեղծ է, Ինճիճեանը միայն հնախօս և աշխարհագրութիւն ու պատմութիւն գրող: Եւ եթէ ես այստեղ կարենք եմ համարում կանգ առնել դրա, ինչպէս և նախորդների վրայ, միայն նրա համար, որ պարզ լինի թէ ինչ վիճակի մէջ է եղել բանաստեղծութիւնը անցեալ դարու առաջին քառորդում:

Ինճիճեանը հարկաւ ոչնչով չէ տարբերւում իւր նախորդներից ու ժամանակիցներից, բայց եթէ նրանով որ ինքն աւելի կարգացած ու զարգացած մարդ է, ուստի աւելի իմաստալից է գրում: Նա իբրև քերթող հանդէս է գալիս 1794 թուին Վենետիկում տպուած «Սմարանոց Բիւզանդեան» գրքով, որ երկու մասից է կազմուած: Առաջին մասի մէջ, որ ունի վերնագիրս՝ «Ծանօթութիւնք աշխարհագրականք լուհասարակ նեղուցին Կ. Պոլսոյ», նա տալիս է ի մի հաւաքեալ համառօտիւ

գրեթէ դամենայն կարեւոր և զերեւելի տեղեկութիւնս նեղուցին ի հին և ի նոր պատմութիւնս և զստորագրութիւն զրից նորա»։ Այս աշխատանքը Ինճիճեանի հնասէր և ժորձ գրչի արդիւնք է, որ այժմ ևս կարգացում է իբրեւ բաղմազան ծանօթութիւնները մի ժողովածու։ Իսկ իւր ժամանակի համար մի գեղեցիկ ուղեցոյց է եղել Կ. Պոլսի։ Բայց Ինճիճեանը դրանով միայն չի բաւականացել, կցել է և մի երկրորդ մաս բանաստեղծական՝ «Ամարանոց Բիւզանդեան», որի մէջ «ոտանաւոր չափմամբ ստորագրեն ծովեղերեայ դիւղորէք նոյն նեղուցին», նախ եւրոպական տիրք և ապա ասիականը։


Ինճիճեան բանաստեղծն այսպեղ մի և նոյն վարդապետն և աշխարհագրութիւն գրողն է։ Չնայելով որ նա բնութեան գեղեցիկութիւններն է նկարագրում և գովում, ուրեմն աշխարհական նիւթ է բանեցնում, բայց կրօնական նպատակի համար։ Եթէ հին աստուածաբանները բնութեամբ Աստուծու գոյութիւնն էին ուղում ապացուցանել, հնախօս կրօնաւորն այս գրութեան միայն շարունակ դգալ է տալիս Աստուծու մտաւր բնութեան մէջ և բնութեան գովեստը շուռ է տալիս և դարձնում փառաբանութիւն Աստուծու։ Վարդապետը բնաւ չի ուրանում ինքն իրեն. ուստի կարեւոր է համարում մի երկրորդ երգ ևս գրել, որի մէջ խրատներ է կարդում Բիւզանդացիներին արժաթիրութեան, անձնասիրութեան, աշխարհատիրութեան ու փառատիրութեան մասին։ Եւ այսպէս նա տաղաչափում է մի «նախերգանքից» ու երկու «երգից» կազմուած բանաստեղծութիւնը, մօտ երեք հազար տող, քառեակներով տների բաժանուած, բոլորը 10-վանկանի տողեր՝ միայն ին յանգում։ Նա նորոգում է Շնորհալու ժամանակի ճաշակը յանգերի վերաբերութեամբ, որ նոյն իսկ Կոմիտաս քահանային դիւր չէր եկել։

Ինճիճեանը հարկաւ բանաստեղծութիւն չէ անում։ Այս ահագին զանգուած տողերի մէջ շատ քիչ քառեակներ են պատահում, որոնք զգացում ունին. բանաստեղծութեան փոխանակ ճարտասանութիւնն է բռնում. առանց գործողութեան միակերպ սառն նկարագիր է։ Բնութիւնը չի կենդանանում ընթերցողին, որովհետեւ ինքը հեղինակն էլ, թէպէտեւ ազդուած է երեւում Բիւզանդիոնի գեղեցիկ տեսարաններից, ուր ծով, լեռ, հովիտ, դաշտ ու անտառ միացած են, բայց չի կենդանացնում իւր երեակայութեան մէջ այդ բնութիւնը։ Եւ հետեանքը այն է լինում, որ հեղինակն իւր աշխատութեան այս մասի մէջ ևս՝ աւելի իւր տեղագրական և հնագրական հմտութիւնն է ցայց տալիս, քան թէ բնութեան

առաջացրած տրամագրութիւնը: Առաջին երգն ամբողջ մի ստանաւորով աշխարհագրութիւն է. իսկ երկրորդ երգը մի հասարակ խրատ: Ժամանակի պահանջն է այդպէս) ոտանաւոր շինել մի նիւթ, որի համար ոտանաւոր պէտք չէ: Այսպէս է, օրինակ, և Մկրտիչ Աւգիւրեանի (1762—1854), մեծ բառարան կազմողի «Բան գործնական» (1812 թ.), որ է գրաբար ոտանաւորով մի «կրթութիւն չորս բարոյական առաքինութեանց վրայ», և կամ Ման. Զախջախեանի «Արուեստ Աստուածսիրութեան» խրատականը (1819 թ.):

Բայց չնայելով այս ամենին՝ Ինճիճեանի գրուածքը իւր ժամանակին իւր տեսակի մէջ մի նորութիւն է և մի քայլ առաջ է տանում մեր բանաստեղծութիւնը: Նորութիւնը նիւթի ընտրութիւնն է. այն՝ որ Ինճիճեանը ցոյց է տալիս, թէ բացի կրօնականից, «խրատօրէն երգերից», էջմիածնի ներքողեանից և գարնան վարդ ու սոխակից, ոտանաւորի նիւթ կարելի է դարձնել և բնութիւնը, երգել բնութեան տեսարանները, կամ, ինչպէս ինքն է ասում, կենդանագրել Արարչի այդ զեղեցկագիր դործը, «կրկին նորոգել բնութեան ստեղծուածը»: Նա իւր երկի սկզբում, ինչպէս հներն անում էին, ղիմում է «զուարթուն սգուն», որ սովորեցնէ իրեն «զգու նիւթական յաննիւթ գոլ բանին» յեղուլ, բայց դժբախտաբար զուարթուն ոգին օգնութեան չէ հասնում և Ինճիճեանի միայն նպատակն է գովելի մնում:

Մ. Արեղեան



ՀԱՅ ԻՐԱՆԻԱՆԱԿԱՆ ՍԻՄՖՈՆՆԵՐԸ

Ազգագրութիւնը հայ բանասիրութեան մէջ, հայ հնութիւնների և արդի ժողովրդական բարբերի ու սովորութիւնների ուսումնասիրութեան մէջ, թէև մանկական հասակ է ցոյց տալիս, բայց արդէն պատկառելի մի տեղ է գրաւել: Նա մեծ դրաւականներ է ներկայացնում ապագայում աւելի ևս լայն ծաւալով ու հիմունքներով ծառայելու ոչ միայն հայ կուլտուրական պատմութեանը, այլ և ընդհանուր հանրամարդկային գիտութեանը: Այն